ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2107-Ա « 22 » ապրիլի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի Հ.2065-Ա
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով՝

1.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 20-ի «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շիրազի փողոց հ.34 շենքի դիմաց գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող թիթեղյա շինությունը (ավտոտնակը) ապամոնտաժելու, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու մասին» հ.2065-Ա որոշումը:

2.Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության, հասարակական կարգի պահպանության ծառայության պետերի և Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի վրա:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ